

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ**

**Աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների պատասխանատու եւ անվտանգ կառավարման նպատակով Համայնքի համակարգ սահմանող՝ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի 2011/70/ԵՎՐԱՏՈՄ ՀՐԱՀԱՆԳ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Ատոմային էներգիայի եվրոպական համայնք ստեղծելու մասին պայմանագիրը եւ մասնավորապես՝ դրա 31-րդ եւ 32-րդ հոդվածները,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից անդամ պետությունների գիտական փորձագետներից նշանակված անձանց խմբի եզրակացությունը ստանալուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը<sup>1</sup>,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը<sup>2</sup>,

քանի որ՝

- 1) Ատոմային էներգիայի եվրոպական համայնք ստեղծելու մասին պայմանագրի (Եվրատոմի պայմանագիր) 2-րդ հոդվածի «բ» կետով նախատեսվում է սահմանել անվտանգության միասնական ստանդարտներ՝ աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության համար.

<sup>1</sup> 2011 թվականի մայիսի 4-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):

<sup>2</sup> 2011 թվականի հունիսի 23-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):

- 2) Եվրատոմի պայմանագրի 30-րդ հոդվածով նախատեսվում է սահմանել հիմնական ստանդարտներ՝ իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության համար.
- 3) Եվրատոմի պայմանագրի 37-րդ հոդվածով պահանջվում է, որ անդամ պետությունները Հանձնաժողովին տրամադրեն ռադիոակտիվ թափոնների հեռացման ցանկացած նախագծի առնչվող ընդհանուր տվյալներ.
- 4) Խորհրդի 96/29/Եվրատոմ հրահանգը<sup>1</sup> սահմանում է անվտանգության հիմնական ստանդարտներ՝ իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների եւ հանրության առողջության պաշտպանության համար: Այս հրահանգը լրացվել է օրենսդրության առավել հստակ դրույթներով.
- 5) Ինչպես ճանաչվել է Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային իրավունքում, Եվրատոմի պայմանագրի 3-րդ գլխի՝ առողջության եւ անվտանգության վերաբերյալ դրույթները մեկ ամբողջություն են կազմում՝ Հանձնաժողովին օժտելով միջուկային աղտոտվածության վտանգներից բնակչությանը եւ շրջակա միջավայրը պաշտպանելու բավականին լայն լիազորություններով<sup>2</sup>.
- 6) «Ճառագայթային վթարների դեպքում տեղեկությունների անհապաղ փոխանակման վերաբերյալ Համայնքի մեխանիզմների մասին» Խորհրդի 1987 թվականի դեկտեմբերի 14-ի 87/600/Եվրատոմ որոշմամբ<sup>3</sup> սահմանվել է ծանուցումների եւ տեղեկությունների տրամադրման համակարգ, որը պետք է կիրառվի անդամ պետությունների կողմից՝ ճառագայթային վթարների դեպքում

<sup>1</sup> ՊՏ L 159, 29.6.1996թ., էջ 1:

<sup>2</sup> C-187/87 (1988 ՌԵԿ էջ 5013) եւ C-29/99 (2002 ՌԵԿ էջ I-11221):

<sup>3</sup> ՊՏ L 371, 30.12.1987թ., էջ 76:

հանրությանը պաշտպանելու նպատակով: «Ճառագայթային վթարների դեպքում առողջության պաշտպանության միջոցների կիրառության եւ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 27-ի 89/618/Եվրատոմ հրահանգով<sup>1</sup> անդամ պետությունների վրա պարտավորություններ են դրվել ճառագայթային վթարների դեպքում հանրությանն այդ մասին տեղեկացնելու մասով.

- 7) Խորհրդի 2003/122/Եվրատոմ հրահանգով<sup>2</sup> նախատեսվում է բարձր ակտիվությամբ, փակ ռադիոակտիվ աղբյուրների եւ տիրագուրկ, այդ թվում՝ չօգտագործվող աղբյուրների վերահսկողություն: Համաձայն Աշխատած վառելիքի կառավարման անվտանգության եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին միասնական կոնվենցիայի (Համատեղ կոնվենցիա)<sup>3</sup> Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ)<sup>3</sup> Ռադիոակտիվ աղբյուրների անվտանգության եւ ապահովության մասին վարքագծի կանոնագրքի եւ ներկայիս արդյունաբերական գործելակերպերի չօգտագործվող փակ աղբյուրները կարող են ենթարկվել վերաօգտագործման, վերամշակման կամ թաղման: Շատ դեպքերում անհրաժեշտ է լինում աղբյուրը կամ սարքավորումը, այդ թվում՝ աղբյուրը վերադրակավորման կամ վերամշակման նպատակով վերադարձնել մատակարարին կամ արտադրողին.
- 8) «Արդյունահանող արդյունաբերությունում գոյացող թափոնների կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգով<sup>3</sup> կարգավորվում է արդյունահանող արդյունաբերություններում գոյացող այնպիսի թափոնների կառավարումը, որոնք կարող են լինել ռադիոակտիվ՝

<sup>1</sup> ՊՏ L 357, 7.12.1989թ., էջ 31:

<sup>2</sup> ՊՏ L 346, 31.12.2003թ., էջ 57:

<sup>3</sup> ՊՏ L 102, 11.4.2006թ., էջ 15:

բացառելով ռադիոակտիվությանը հատուկ այն ասպեկտները, որոնք Եվրատոմի պայմանագրով կարգավորվող հարցեր են.

- 9) Խորհրդի 2006/117/Եվրատոմ հրահանգով<sup>1</sup> սահմանվում է ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի անդրսահմանային առաքումը ստուգելու եւ վերահսկելու՝ Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի (Համայնք) համակարգ: Այդ հրահանգը լրացվել է «Ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի՝ երրորդ երկրներ արտահանման համար չափորոշիչների մասին» Հանձնաժողովի՝ 2008 թվականի դեկտեմբերի 4-ի 2008/956/Եվրատոմ առաջարկությամբ<sup>2</sup>.
- 10) միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության գծով Համայնքի իրավական համակարգը սահմանող՝ Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի 2009/71/Եվրատոմ հրահանգով<sup>3</sup> անդամ պետությունների վրա պարտավորություններ են դրվում միջուկային անվտանգության ազգային համակարգ ձեւավորելու եւ պահպանելու մասով: Չնայած այդ Հրահանգը հիմնականում վերաբերում է միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգությանը՝ դրանում նշված է, որ կարելի է նաեւ ապահովել աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարումը, այդ թվում՝ նաեւ պահեստարաններում եւ գերեզմանոցներում: Հետեւաբար, ինչպես 2009/71/Եվրատոմ հրահանգում, այնպես էլ սույն հրահանգում քննարկված տեղակայանքները չպետք է ենթարկվեն անհամաչափ կամ անհարկի պարտավորությունների, հատկապես՝ հաշվետվություններ ներկայացնելու մասով.
- 11) շրջակա միջավայրին վերաբերող որոշ նախագծերի եւ ծրագրերի կազմման առումով հանրային մասնակցությունը սահմանող՝

<sup>1</sup> ՊՏ L 337, 5.12.2006թ., էջ 21:

<sup>2</sup> ՊՏ L 338, 17.12.2008թ., էջ 69:

<sup>3</sup> ՊՏ L 172, 2.7.2009թ., էջ 18:

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգը<sup>1</sup> կիրառվում է «Որոշ նախագծերի եւ ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգով կարգավորվող որոշ նախագծերի եւ ծրագրերի նկատմամբ<sup>2</sup>.

- 12) «Միջուկային տեղակայանքների, աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների շահագործման դադարեցման համար ֆինանսական միջոցների կառավարման մասին» Հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի 2006/851/Եվրատոմ առաջարկությունն<sup>3</sup> ուղղված է ֆինանսավորման, ֆինանսական ապահովության եւ դրա թափանցիկության պատշաճությանը՝ ապահովելու համար միջոցների միայն նպատակային օգտագործումը.
- 13) համաձայն Լիտվայի, Սլովակիայի եւ Բուլղարիայի՝ Եվրոպական միությանը միանալու հատուկ պայմանների, որտեղ վաղաժամկետ փակվել են որոշ ատոմակայաններ, Համայնքը մասնակցել է ֆինանսական միջոցների ձեռքբերման գործընթացին եւ որոշ պայմաններով ֆինանսական աջակցություն է տրամադրում շահագործման դադարեցման տարբեր նախագծերին, այդ թվում՝ ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի կառավարմանը.
- 14) ՄԱԳՍԷ-ի հովանու ներքո կնքված Համատեղ կոնվենցիան խթան հանդիսացող գործիք է, որը նպատակաուղղված է ներպետական միջոցառումների եւ միջազգային համագործակցության իրականացման միջոցով աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում ամբողջ աշխարհում անվտանգության բարձր մակարդակ ձեռք բերելուն եւ պահպանելուն.

<sup>1</sup> ՊՏ L 156, 25.6.2003թ., էջ 17:

<sup>2</sup> ՊՏ L 197, 21.7.2001թ., էջ 30:

<sup>3</sup> ՊՏ L 330, 28.11.2006թ., էջ 31:

- 15) որոշ անդամ պետություններ արդեն մասնակցել են եւ մտադիր են հետագայում մասնակցել ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի կողմից իրականացվող, «Գլոբալ սպառնալիքի նվազեցման նախաձեռնություն» կոչվող ծրագրին՝ հետազոտական ռեակտորի աշխատած վառելիքն ուղարկելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ եւ Ռուսաստանի Դաշնություն.
- 16) 2006 թվականին ՄԱԳԱՏԷ-ն թարմացրել է ստանդարտների կառուցվածքը եւ հրապարակել Անվտանգության հիմնարար սկզբունքները, որոնք համատեղ հովանավորվել են Համայնքի, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (Միջուկային էներգիայի գործակալության) եւ այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Անվտանգության հիմնարար սկզբունքների կիրառումը կնպաստի անվտանգության միջազգային ստանդարտների կիրառմանը եւ կհանգեցնի տարբեր պետությունների մեխանիզմների միջեւ համապատասխանության.
- 17) հետեւելով Խորհրդի՝ ԵՄ մակարդակով բարձրաստիճան խումբ կազմավորելու հրավերին, որի մասին նշված է «Միջուկային անվտանգության եւ աշխատած միջուկային վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» Խորհրդի 2007 թվականի մայիսի 8-ի եզրակացություններում՝ «Միջուկային անվտանգության եւ թափոնների կառավարման հարցերով Եվրոպական բարձրաստիճան խմբի հիմնադրման մասին» Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 17-ի 2007/530/Եվրատոմ որոշմամբ<sup>1</sup> հիմնադրվեց Միջուկային անվտանգության կարգավորողների եվրոպական խումբը (ՄԱԿԵԽ)՝ կոչված նպաստելու աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտի նպատակների իրականացմանը: ՄԱԿԵԽ-ի

<sup>1</sup> ՊՏ L 195, 17.7.2007թ., էջ 44:

եզրակացությունները եւ առաջարկություններն արտացոլվել են «Աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման մասին» Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի բանաձեւում եւ «Միջուկային անվտանգության կարգավորողների եվրոպական խմբի կողմից հաշվետվություն ներկայացնելու մասին» Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 10-ի եզրակացություններում.

- 18) 2007 թվականի մայիսի 10-ին Եվրոպական պառլամենտն ընդունել է «Եվրատոմի գնահատում՝ Միջուկային էներգիայի եվրոպական քաղաքականության 50 տարի» բանաձեւը, որով այն կոչ է արել ռադիոակտիվ թափոնների կառավարման համար սահմանել ներդաշնակեցված չափորոշիչներ եւ հրավիրել է Հանձնաժողովին՝ վերանայելու իր օրենսդրական առաջարկության համապատասխան նախագծերը եւ ներկայացնելու նոր առաջարկություն ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ հրահանգի մասով.
- 19) մինչ յուրաքանչյուր անդամ պետություն ազատ է որոշելու իր էներգետիկ հաշվեկշիռը, բոլոր անդամ պետությունները ռադիոակտիվ թափոններ են ստանում էլեկտրաէներգիայի արտադրությունից կամ արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական եւ հետազոտական գործողություններ իրականացնելու ընթացքում, կամ միջուկային տեղակայանքների շահագործումը դադարեցնելու արդյունքում, կամ էլ վերականգնման եւ միջամտության իրավիճակներում.
- 20) միջուկային ռեակտորների գործարկումից առաջանում է աշխատած վառելիք: Յուրաքանչյուր անդամ պետություն ազատ է սահմանելու վառելիքի ցիկլի իր քաղաքականությունը: Աշխատած վառելիքը կարող է համարվել արժեքավոր աղբյուր, որը կարող է վերամշակվել, կամ էլ ռադիոակտիվ թափոն, որը ենթակա է անմիջական թաղման: Ցանկացած տարբերակի ընտրության դեպքում անհրաժեշտ է նկատի

ունենալ վերամշակման ընթացքում առանձնացված բարձր ռադիոակտիվության թափոնների կամ թափոն համարվող աշխատած վառելիքի թաղումը.

- 21) ռադիոակտիվ թափոնները, այդ թվում՝ թափոն համարվող աշխատած վառելիքը պահանջում են երկարաժամկետ պահպանում եւ մեկուսացում մարդկանցից եւ կենսամիջավայրից: Դրանց առանձնահատուկ բնույթը, այսինքն՝ այն, որ ռադիոնուկլիդներ են պարունակում, պահանջում է մեխանիզմներ՝ պաշտպանելու մարդկանց առողջությունը եւ շրջակա միջավայրն իրենցնող ճառագայթումից բխող վտանգներից, այդ թվում՝ թաղումը համապատասխան տեղակայանքներում՝ որպես տեղակայման վերջնակետ: Ռադիոակտիվ թափոնների պահեստավորումը, այդ թվում՝ երկարաժամկետ պահեստավորումը, միջանկյալ լուծում է, սակայն այլընտրանք չէ թաղմանը.
- 22) այդ մեխանիզմները պետք է հիմնվեն ռադիոակտիվ թափոնների դասակարգման ազգային սխեմայի վրա՝ ամբողջությամբ հաշվի առնելով ռադիոակտիվ թափոնների առանձին տեսակները եւ հատկությունները.
- 23) ցածր եւ միջին ակտիվության թափոնների տիպային թաղումը մերձակերեսային թաղումն է: Տեխնիկական մակարդակում լայնորեն ընդունված է, որ այս ժամանակ խորը երկրաբանական թաղումը համարվում է ամենաապահով եւ ամենակայուն տարբերակը՝ որպես բարձր ակտիվության թափոնների եւ թափոն համարվող աշխատած վառելիքի կառավարման վերջնակետ: Անդամ պետությունները, շարունակելով պատասխանատվություն կրել իրենց աշխատած վառելիքի եւ ցածր, միջին կամ բարձր ակտիվության ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ իրենց համապատասխան քաղաքականությունների համար, պետք է իրենց ազգային



քաղաքականության մեջ ներառեն թաղում պլանավորելու եւ իրականացնելու տարբերակներ: Քանի որ գերեզմանոց նախագծելը եւ շահագործելը շատ տասնամյակներ կտեւեն, անհրաժեշտ է, որ շատ ծրագրեր մնան ճկուն եւ հարմարվող, օրինակ՝ կայանի պայմանների կամ թաղման համակարգի հնարավոր զարգացման մասին նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Ռադիոակտիվ թափոնների երկրաբանական թաղման իրականացման տեխնոլոգիական հարթակի (IGD-TP) շրջանակներում իրականացվող գործողությունները կարող էին նպաստել այս մասով փորձի եւ տեխնոլոգիայի մատչելիությանը: Այդ նպատակով հետադարձելիությունը եւ հետագծելիությունը՝ որպես գործարկման եւ նախագծման չափորոշիչներ, կարող են օգտագործվել՝ ուղղորդելու դեպի թաղման համակարգի տեխնիկական զարգացման: Այնուամենայնիվ, այդ չափորոշիչները չպետք է փոխարինեն լավ նախագծված գերեզմանոցը, որն ունի պաշտպանիչ հիմք փակման համար: Փոխզիջման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի կառավարման հիմքում ընկած են ժամանակակից գիտությունն ու տեխնոլոգիան:

- 24) յուրաքանչյուր անդամ պետության բարոյական պարտավորությունը պետք է լինի խուսափել ապագա սերունդների վրա աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների հետ կապված ցանկացած անհարկի բեռ դնելուց, այդ թվում՝ ցանկացած այնպիսի ռադիոակտիվ թափոնների, որոնց առաջացումն ակնկալվում է գործող միջուկային կառույցների շահագործման դադարեցումից: Սույն հրահանգի իրականացման միջոցով անդամ պետությունները ցույց կտան, որ ողջամիտ քայլեր են ձեռնարկել՝ ապահովելու այդ նպատակի իրականացումը:
- 25) անդամ պետությունների՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար հիմնական

պատասխանատվությունը Համատեղ կոնվենցիայով վերահաստատված հիմնարար սկզբունք է: Սույն հրահանգով պետք է կատարելագործվի ազգային պատասխանատվության, ինչպես նաև աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասով իրավասու կարգավորող մարմնի հսկողության ներքո արտոնագրատիրոջ կողմից իրականացվող հիմնական պարտականության սկզբունքը, ինչպես նաև պետք է ամրապնդվի իրավասու կարգավորող մարմնի դերն ու անկախությունը.

- 26) հասկանալի է, որ իրավասու կարգավորող մարմնի կողմից իր կարգավորիչ աշխատանքներն իրականացնելու նպատակով ռադիոակտիվ աղբյուրների օգտագործումը չի ազդում վերջինիս անկախության վրա.
- 27) անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար.
- 28) անդամ պետությունները պետք է մշակեն ազգային ծրագրեր՝ ապահովելու համար քաղաքական որոշումների փոխատեղումը հստակ դրույթներում՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների՝ առաջացումից մինչև թաղում կառավարման բոլոր քայլերը ժամանակին իրականացնելու նպատակով: Այդպիսի ազգային ծրագրերը պետք է հնարավոր լինի ներկայացնել մեկ ստանդարտ փաստաթղթի կամ մի քանի փաստաթղթերի ձևով.
- 29) հասկանալի է, որ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության համար ազգային մեխանիզմները կկիրառվեն իրավական, նորմատիվ կամ կազմակերպական փաստաթղթի որոշակի ձևի միջոցով, որի ընտրությունը գտնվում է անդամ պետությունների իրավասության շրջանակներում.

- 30) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման տարբեր փուլերը սերտորեն փոխկապակցված են: Յուրաքանչյուր առանձին փուլում ընդունվող որոշումները կարող են ազդել հետագա փուլի վրա: Հետեւաբար ազգային ծրագրեր մշակելիս այդ փոխկախվածությունը պետք է հաշվի առնվի.
- 31) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման գործընթացում կարելի է թափանցիկությունը: Թափանցիկությունը պետք է ապահովվի հանրության արդյունավետ իրազեկվածությամբ՝ հնարավորություններ ապահովելով բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական մարմինների եւ հասարակության համար՝ ազգային եւ միջազգային պարտավորություններին համապատասխան որոշումներ կայացնելու գործընթացներին մասնակցելու մասով.
- 32) անդամ պետությունների միջեւ, ինչպես նաեւ միջազգային մակարդակում համագործակցությունը կարող է հեշտացնել եւ արագացնել որոշումներ կայացնելու գործընթացները փորձառության եւ տեխնոլոգիայի մատչելիության միջոցով.
- 33) որոշ անդամ պետություններ համարում են, որ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար տեղակայանքների, այդ թվում՝ գերեզմանոցների համատեղ կիրառումը կարող է շահավետ, ապահով եւ ծախսարդյունավետ տարբերակ լինել, եթե դրա հիմքում ընկած է տվյալ անդամ պետությունների միջեւ փոխհամաձայնությունը.
- 34) անվտանգության վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին առնչվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն ռիսկերի մակարդակին (աստիճանական մոտեցում) եւ պետք է հիմք ապահովեն աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարմանն առնչվող որոշումների համար: Սա պետք է հնարավորություն տա

հայտնաբերելու անորոշության ոլորտները, որոնց վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել անվտանգությունը գնահատելիս: Անվտանգության վերաբերյալ որոշումների հիմքում պետք է ընկած լինեն անվտանգության գնահատման եզրահանգումները եւ այդ գնատահման, ինչպես նաեւ այդ գնահատման հուսալիության եւ վստահելիության վերաբերյալ տեղեկությունները եւ դրանում արված ենթադրությունները: Հետեւաբար որոշումներ կայացնելու գործընթացի հիմքում պետք է ընկած լինեն մի շարք փաստարկներ եւ ապացույցներ, որոնք նպատակաուղղված են ցույց տալու, որ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարմանն առնչվող տեղակայանքի կամ գործողությունների համար կիրառվել է անվտանգության անհրաժեշտ ստանդարտը: Մասնավորապես գերեզմանոցի դեպքում փաստաթղթերի միջոցով պետք է լավացնել այն ասպեկտների մասին պատկերացումները, որոնք ազդում են թաղման համակարգի, այդ թվում՝ բնական (երկրաբանական) եւ արհեստական խոչընդոտների անվտանգության, ինչպես նաեւ ժամանակի ընթացքում թաղման համակարգի ակնկալվող զարգացման վրա:

- 35) անդամ պետության համար, որտեղ առկա չէ աշխատած վառելիք, կամ որը չունի աշխատած վառելիք ունենալու անմիջական հեռանկար, ներկայումս չի իրականացնում եւ ոչ էլ պլանավորում է իրականացնել աշխատած վառելիքին առնչվող գործողություններ, սույն հրահանգի՝ աշխատած վառելիքի վերաբերյալ դրույթները փոխատեղելը եւ դրանք իրականացնելը կլինեն անհամաչափ եւ անհարկի պարտավորություն: Հետեւաբար, քանի դեռ այդ անդամ պետությունները որոշում չեն կայացրել միջուկային վառելիքի առնչությամբ որեւէ գործողություն իրականացնելու վերաբերյալ, դրանք պետք է ազատվեն սույն հրահանգի՝ աշխատած վառելիքի վերաբերյալ դրույթները փոխատեղելու եւ իրականացնելու պարտավորությունից:

- 36) Սլովենիայի Հանրապետության եւ Խորվաթիայի Հանրապետության միջեւ՝ Կրսկո ատոմակայանի կարգավիճակի եւ դրա ներդրմանը, շահագործմանը եւ շահագործման դադարեցմանն առնչվող այլ իրավական հարաբերությունների կարգավորման մասին պայմանագրով կարգավորվում է ատոմակայանի համասեփականությունը: Այդ պայմանագիրը ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի կառավարման եւ թաղման գործընթացների համար նախատեսում է համատեղ պատասխանատվություն: Հետեւաբար պետք է բացառություններ սահմանել սույն հրահանգի որոշ դրույթներից՝ այդ երկկողմ պայմանագրի լիարժեք իրականացումը չխոչընդոտելու նպատակով.
- 37) համարելով, որ ազգային համակարգում պետք է հաշվի առնել աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների հետ կապված ճառագայթային եւ ոչ ճառագայթային վտանգները, սույն հրահանգում ընդգրկված չեն ոչ ճառագայթային վտանգները, որոնք կարգավորվում են Եվրոպական միության գործունեության մասին համաձայնագրով.
- 38) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում բանիմացության եւ հմտությունների պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես անվտանգության բարձր մակարդակ ապահովելու էական տարր, պետք է հիմնված լինեն աշխատանքային փորձով ձեռք բերված ուսումնառության վրա.
- 39) դերակատարների միջեւ տեխնիկական համագործակցությամբ իրականացվող գիտական հետազոտությունը եւ տեխնոլոգիական զարգացումը կարող են հորիզոններ բացել՝ բարելավելու աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման գործընթացը, ինչպես նաեւ նպաստելու բարձր ակտիվության թափոնների ռադիոտոքսիկ ռիսկերի կրճատմանը.
- 40) փորձագիտական գնահատումը կարող է լինել Եվրոպական միությունում ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի

կառավարման ոլորտում վստահություն եւ հավատ ձեւավորելու գերազանց միջոց՝ փորձառություն ձեւավորելու եւ փոխանակելու, ինչպես նաեւ բարձր ստանդարտներ ապահովելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ 1

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ,  
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

*Հոդված 1*

**Կարգավորման առարկան**

1. Սույն հրահանգը սահմանում է աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների պատասխանատու եւ անվտանգ կառավարումն ապահովելու համար Համայնքի համակարգ՝ ապագա սերունդների վրա անհարկի բեռ դնելուց խուսափելու նպատակով:
2. Այն ապահովում է, որ անդամ պետություններն աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության բարձր մակարդակ ապահովելու համար նախատեսեն համապատասխան ազգային մեխանիզմներ՝ իոնացնող ճառագայթումից բխող վտանգներից աշխատողներին եւ հանրությանը պաշտպանելու նպատակով:

3. Այն ապահովում է աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ անհրաժեշտ հանրային տեղեկատվության տրամադրումը եւ մասնակցությունն այդ գործընթացին՝ պատշաճ ձեւով հաշվի առնելով անվտանգության եւ գաղտնի տեղեկատվության հարցերը:
4. Սույն հրահանգը լրացնում է Եվրատոմի պայմանագրի 30-րդ հոդվածում նշված աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվտանգության վերաբերյալ հիմնական ստանդարտները՝ չհակասելով 96/29/Եվրատոմ հրահանգին:

### Հոդված 2

#### Գործողության ոլորտը

1. Սույն հրահանգը կիրառվում է հետեւյալի բոլոր փուլերի նկատմամբ՝
  - ա) աշխատած վառելիքի կառավարում, երբ աշխատած վառելիքն առաջանում է քաղաքացիների գործողությունների արդյունքում.
  - բ) ռադիոակտիվ թափոնների կառավարում՝ առաջացումից մինչեւ թաղում, երբ ռադիոակտիվ թափոններն առաջանում են քաղաքացիների գործողությունների արդյունքում:
2. Սույն հրահանգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
  - ա) արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոններ, որոնք կարող են լինել ռադիոակտիվ, եւ որոնք կարգավորվում են 2006/21/ԵՀ հրահանգով.
  - բ) թույլատրված բացթողումներ:
3. Սույն հրահանգի 4-րդ հոդվածի 4-րդ կետը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) չօգտագործվող փակ աղբյուրների վերադարձ մատակարարին կամ արտադրողին.
  - բ) հետազոտական ռեակտորների աշխատած վառելիքի առաքում այն երկիր, որտեղ մատակարարվում կամ արտադրվում է հետազոտական ռեակտորի աշխատած վառելիքը՝ հաշվի առնելով կիրառելի միջազգային համաձայնագրերը.
  - գ) գործող Կրսկո ատոմակայանի թափոններ եւ աշխատած վառելիք, երբ դրանք վերաբերում են Սլովենիայի եւ Խորվաթիայի միջեւ իրականացվող առաքումներին:
4. Սույն հրահանգը չի ներազդում անդամ պետության կամ այդ անդամ պետությունում գործող ընկերության՝ վերամշակումից հետո ռադիոակտիվ թափոնները դրանց ծագման երկիր վերադարձնելու իրավունքի վրա, եթե՝
- ա) ռադիոակտիվ թափոնները պետք է առաքվեն այդ անդամ պետություն կամ ընկերություն՝ վերամշակման նպատակով, կամ
  - բ) այլ նյութեր պետք է առաքվեն այդ անդամ պետություն կամ ընկերություն՝ ռադիոակտիվ թափոնների վերականգման նպատակով:

Սույն հրահանգը չի ներազդում այն անդամ պետության կամ այդ անդամ պետությունում գործող այն ընկերության՝ մշակում եւ վերամշակում կամ դրան համարժեք համաձայնեցված գործընթաց անցած վերականգնված ռադիոակտիվ թափոնները դրանց ծագման երկիր վերադարձնելու իրավունքի վրա, որին մշակման եւ վերամշակման համար պետք է առաքվի աշխատած վառելիքը:



*Հոդված 3***Սահմանումները**

Սույն հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «փակում» նշանակում է աշխատած վառելիքը կամ ռադիոակտիվ թափոնները գերեզմանոցում տեղադրելուց հետո որոշակի պահի բոլոր գործողությունների, այդ թվում՝ եզրափակիչ ինժեներական կամ այլ բնույթի այնպիսի աշխատանքների ավարտ, որոնք անհրաժեշտ են տեղակայանքը երկար ժամանակ անվտանգ վիճակում պահելու համար.
- 2) «իրավասու կարգավորող մարմին» նշանակում է աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության կարգավորման ոլորտում գործող եւ անդամ պետությունում նշանակված մարմին կամ մարմինների համակարգ՝ 6-րդ հոդվածում նշվածին համապատասխան.
- 3) «թաղում» նշանակում է աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների տեղադրում տեղակայանքում՝ առանց դուրս բերելու մտադրության.
- 4) «գերեզմանոց» նշանակում է ցանկացած օբյեկտ կամ կառույց, որի հիմնական նպատակը ռադիոակտիվ թափոնները թաղելն է.
- 5) «արտոնագիր» նշանակում է անդամ պետության իրավազորության ներքո շնորհված՝ աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարմանն առնչվող ցանկացած գործունեություն իրականացնելու համար իրավական փաստաթուղթ կամ փաստաթուղթ, որով դրվում է պատասխանատվություն աշխատած վառելիքի կառավարման տեղակայանքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարման

տեղակայանքի տեղակայման, նախագծման, կառուցման, շահագործման, գործարկման, շահագործման դադարեցման կամ փակման համար.

- 6) «արտոնագրատեր» նշանակում է իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն ընդհանուր պատասխանատվություն է կրում աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարմանն առնչվող ցանկացած գործողության կամ տեղակայանքի համար, ինչպես նշված է արտոնագրում.
- 7) «ռադիոակտիվ թափոն» նշանակում է գազային, հեղուկ կամ պինդ վիճակում գտնվող ռադիոակտիվ նյութ, որի համար անդամ պետությունը կամ իրավաբանական կամ ֆիզիկական այն անձը, որի որոշումներն ընդունվում են անդամ պետության համար, չեն նախատեսում կամ դիտարկում հետագա օգտագործում, եւ որը վերահսկվում է իրավասու կարգավորող մարմնի կողմից որպես ռադիոակտիվ թափոն՝ անդամ պետության իրավական եւ նորմատիվ իրավական հիմքերի համաձայն.
- 8) «ռադիոակտիվ թափոնների կառավարում» նշանակում է բոլոր այն գործողությունները, որոնք առնչվում են ռադիոակտիվ թափոնների տնօրինմանը, նախնական մշակմանը, մշակմանը, որոշակի վիճակի բերմանը, պահեստավորմանը կամ թաղմանը՝ բացառությամբ կայանից դուրս փոխադրման.
- 9) «ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանք» նշանակում է ցանկացած տեղակայանք կամ կառույց, որի հիմնական նպատակը ռադիոակտիվ թափոնների կառավարումն է.
- 10) «վերամշակում» նշանակում է գործընթաց կամ գործողություն, որի նպատակն է աշխատած վառելիքից հանել տրոհվող եւ վերարտադրվող նյութերը՝ հետագա օգտագործման նպատակով.

- 11) «աշխատած վառելիք» նշանակում է միջուկային վառելիք, որը ճառագայթվել է մշտապես հանվել է ռեակտորի ակտիվ գոտուց. աշխատած վառելիքը կամ կարող է համարվել վերամշակման ենթակա օգտակար ռեսուրս, կամ էլ ենթակա է թաղման, եթե համարվում է ռադիոակտիվ թափոն.
- 12) «աշխատած վառելիքի կառավարում» նշանակում է բոլոր այն գործողությունները, որոնք առնչվում են աշխատած վառելիքի տնօրինմանը, պահեստավորմանը, վերամշակմանը կամ թաղմանը՝ բացառությամբ կայանից դուրս փոխադրման.
- 13) «աշխատած վառելիքի կառավարման տեղակայանք» նշանակում է ցանկացած տեղակայանք կամ կառույց, որի հիմնական նպատակն աշխատած վառելիքի կառավարումն է.
- 14) «պահեստավորում» նշանակում է աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների պահում տեղակայանքում՝ դուրս բերելու մտադրությամբ:

#### Հոդված 4

#### **Ընդհանուր սկզբունքները**

1. Անդամ պետությունները սահմանում են աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային քաղաքականություններ եւ պահպանում դրանք: Չհակասելով 2-րդ հոդվածի 3-րդ կետին՝ յուրաքանչյուր անդամ պետություն կրում է վերջնական պատասխանատվություն այդ երկրում առաջացած աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար:

2. Եթե ռադիոակտիվ թափոնները կամ աշխատած վառելիքը մշակման կամ վերամշակման նպատակով առաքվում են որեւէ անդամ պետություն կամ երրորդ երկիր, ապա այդ նյութերի, այդ թվում՝ թափոնային կարգավիճակ ունեցող թափոնների անվտանգ եւ պատասխանատու թաղման համար հիմնական պատասխանատվությունը շարունակում է կրել այն անդամ պետությունը կամ երրորդ երկիրը, որտեղից առաքվել է ռադիոակտիվ նյութը:
3. Ազգային քաղաքականությունների հիմքում ընկած են հետեւյալ բոլոր սկզբունքները՝
  - ա) ռադիոակտիվ թափոնների առաջացումը հասցվում է նվազագույնի, ինչն ինչպես գործողության, այնպես էլ չափերի առումով ողջամտորեն իրագործելի է՝ նախագծման համապատասխան միջոցների, ինչպես նաեւ գործարկման եւ շահագործման դադարեցման գործելակերպերի, այդ թվում՝ նյութերի վերամշակման եւ վերաօգտագործման միջոցով.
  - բ) հաշվի է առնվում աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների առաջացման եւ կառավարման բոլոր փուլերի միջեւ փոխկախվածությունը.
  - գ) աշխատած վառելիքը եւ ռադիոակտիվ թափոններն անվտանգ ձեւով կառավարվում են, այդ թվում՝ երկարաժամկետ հեռանկարում անվտանգության պասիվ միջոցներով.
  - դ) միջոցառումներն իրականացվում են աստիճանական մոտեցմամբ.
  - ե) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված ծախսերը կրում են այն պետությունները, որտեղ առաջացել են այդ նյութերը.
  - զ) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման բոլոր փուլերի դեպքում կիրառվում է ապացույցներով հիմնավորված եւ փաստաթղթով ամրագրված՝ որոշումների կայացման գործընթաց:

4. Ռադիոակտիվ թափոնները թաղվում են այն անդամ պետությունում, որտեղ առաջացել են, եթե առաքման ժամանակ ուժի մեջ չի մտել տվյալ եւ մեկ այլ անդամ պետության կամ երրորդ երկրի միջեւ այդ երկրներից մեկում գերեզմանոց օգտագործելու մասին այնպիսի համաձայնագիր, որը հաշվի է առնում Հանձնաժողովի կողմից 2006/117/Եվրատոմ հրահանգի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված չափորոշիչները:

Նախքան երրորդ երկիր առաքում իրականացնելն արտահանող անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին ցանկացած նման համաձայնագրի բովանդակության մասին եւ ողջամիտ միջոցներ է ձեռնարկում՝ համոզվելու, որ՝

- ա) առաքման երկիրն աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ համաձայնագիր է կնքել Համայնքի հետ կամ Աշխատած վառելիքի կառավարման անվտանգության եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին համատեղ կոնվենցիայի (Համատեղ կոնվենցիա) կողմ է հանդիսանում.
- բ) առաքման երկիրն ունի ռադիոակտիվ թափոնների կառավարման եւ թաղման ծրագրեր, որոնց նպատակն է ապահովել սույն հրահանգով սահմանված նպատակներին համարժեք անվտանգության բարձր մակարդակ.
- գ) առաքման երկրում տեղակայված գերեզմանոցն ունի առաքվելիք ռադիոակտիվ թափոնների ստացման թույլտվություն, գործում է առաքումից առաջ եւ կառավարվում է առաքման այդ երկրի՝ ռադիոակտիվ թափոնների կառավարման եւ թաղման ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան:

## ԳԼՈՒԽ 2

**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***Հոդված 5***Ազգային համակարգը**

1. Անդամ պետություններն աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար ստեղծում են ազգային օրենսդրական, կարգավորիչ եւ կազմակերպչական համակարգ (ազգային համակարգ) եւ ապահովում դրա գործառնությունը, որով համապատասխան իրավասու մարմինների միջեւ բաշխվում է պատասխանատվությունը եւ նախատեսվում համաձայնեցում: Ազգային համակարգով նախատեսվում են հետեւյալ բոլոր կետերը՝
  - ա) ազգային ծրագիր՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման քաղաքականության իրականացման համար.
  - բ) ազգային մեխանիզմներ՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության համար: Այդ մեխանիզմների ընդունման կարգի եւ կիրառման գործիքների վերաբերյալ որոշման կայացումն անդամ պետությունների իրավասությունն է.
  - գ) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման գործողությունների, տեղակայանքների կամ երկուսի արտոնագրման համակարգ, այդ թվում՝ աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարման գործողությունների, աշխատած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքի՝ առանց արտոնագրի գործարկման կամ երկուսի արգելում եւ անհրաժեշտության դեպքում՝ գործողության, տեղակայանքի կամ երկուսի հետագա կառավարման պայմանների սահմանում.

- դ) համապատասխան վերահսկողության համակարգ, կառավարման համակարգ, վերահսկողական ստուգումներ, փաստաթղթավորման եւ զեկուցման պարտավորություններ ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի կառավարման գործողությունների, տեղակայանքների կամ երկուսի համար, այդ թվում՝ համապատասխան միջոցառումներ՝ գերեզմանոցների փակմանը հաջորդող ժամանակահատվածների համար.
- ե) հարկադրական միջոցներ, այդ թվում՝ գործունեության կասեցում եւ արտոնագրի փոփոխում, գործողության ժամկետի լրացում կամ չեղարկում, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ բարելավված անվտանգությանը նպաստող այլընտրանքային լուծումների պահանջներ.
- զ) պատասխանատվության բաշխում աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման տարբեր փուլերում ընդգրկված մարմինների միջեւ. մասնավորապես՝ ազգային համակարգի շրջանակներում աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների հիմնական պատասխանատվությունը կրում է այն պետությունը, որտեղ թափոններն առաջացել են, կամ առանձին հանգամանքներում այն արտոնագրատերը, որին իրավասու մարմինների կողմից վստահվել է այդ պատասխանատվությունը.
- է) ազգային պահանջներ՝ հանրության իրազեկվածության եւ մասնակցության համար.
- ը) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ֆինանսավորման սխեմա (սխեմաներ)՝ համաձայն 9-րդ հոդվածի:
2. Անդամ պետություններն անհրաժեշտության դեպքում ապահովում են ազգային համակարգի բարելավումը՝ հաշվի առնելով շահագործման փորձառությունը, 4-րդ հոդվածի 3-րդ կետի «զ» ենթակետում նշված

որոշումներ կայացնելու գործընթացից ստացված դիտարկումները, ինչպես նաև համապատասխան տեխնոլոգիայի զարգացումը և հետազոտությունները:

### Հոդված 6

#### **Իրավասու կարգավորող մարմինը**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ստեղծում է աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման ոլորտի իրավասու կարգավորող մարմին և ապահովում դրա գործառնությունը:
2. Անդամ պետություններն ապահովում են միջուկային էներգիայի կամ ռադիոակտիվ նյութի, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի արտադրության կամ ռադիոիզոտոպների կիրառման խթանմամբ կամ օգտագործմամբ կամ աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարմամբ զբաղվող ցանկացած այլ մարմնից կամ կազմակերպությունից իրավասու կարգավորող մարմնի ֆունկցիոնալ առումով անկախ լինելը՝ ապահովելով արդյունավետ անկախություն վերջինիս կարգավորիչ գործառույթի վրա անհարկի ազդեցությունից:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու կարգավորող մարմինն տրվեն օրինական լիազորություններ, ինչպես նաև 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերում ներկայացված ազգային համակարգի հետ կապված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:



*Հոդված 7***Արտոնագրատերերը**

1. Անդամ պետություններն ապահովում են արտոնագրատիրոջ կողմից աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների եւ (կամ) գործողությունների անվտանգության համար հիմնական պատասխանատվության ստանձնումը: Այդ պարտականությունը պատվիրակման ենթակա չէ:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ առկա ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի իրավասու կարգավորող մարմնի հսկողության ներքո պարբերաբար գնահատել եւ ստուգել, ինչպես նաեւ իրագործելիության ողջամտության սահմաններում շարունակաբար բարելավել ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի կառավարման տեղակայանքի կամ գործունեության անվտանգությունը՝ սխտեմատիկ եւ ստուգման ենթակա եղանակով: Սրան պետք է հասնել անվտանգության պատշաճ գնահատման, այլ փաստարկների եւ ապացույցների միջոցով:
3. Որպես տեղակայանքի կամ գործունեության արտոնագրման մի մաս՝ անվտանգության ցուցադրումն ընդգրկում է գործունեության մշակումը եւ իրականացումը, տեղակայանքի կառուցումը, գործարկումը եւ շահագործման դադարեցումը կամ գերեզմանոցի փակումը, ինչպես նաեւ գերեզմանոցի փակմանը հաջորդող փուլը: Անվտանգության ցուցադրման աստիճանը պետք է համապատասխանի գործարկման բարդությանը եւ ռադիոակտիվ թափոնների ու աշխատած վառելիքի, ինչպես նաեւ տեղակայանքի կամ գործողության հետ կապված վտանգների ուժգնության աստիճանին: Արտոնագրման գործընթացը պետք է նպաստի նորմալ աշխատանքային պայմաններում, շահագործման ընթացքում նախատեսվող դեպքերի եւ միջուկային ռեակտորի նախագծային վթարների պայմաններում տեղակայանքի կամ գործողության անվտանգությանը: Այն պետք է

ապահովի տեղակայանքի կամ գործողության անհրաժեշտ անվտանգությունը: Միջոցներ են ձեռնարկվում՝ կանխարգելելու վթարները եւ մեղմացնելու վթարների հետեւանքները, այդ թվում՝ ֆիզիկական խոչընդոտների ստուգումը եւ արտոնագրատերերի վարչական պաշտպանության ընթացակարգերը, որոնք անհաջողություն կունենային՝ նախքան իրենց նույն ճառագայթումը զգալի ազդեցություն կունենար աշխատողների եւ հանրության վրա: Այդ մոտեցմամբ հայտնաբերվում եւ կրճատվում են անսարքությունները:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի ստեղծել եւ գործողության մեջ դնել աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների ընդհանուր կառավարման անվտանգությանն առաջնայնություն տվող, ինչպես նաեւ իրավասու կարգավորող մարմնի կողմից պարբերաբար ստուգման ենթակա կառավարման, այդ թվում՝ որակի ապահովման ինտեգրված համակարգեր:
5. Անդամ պետություններն ապահովում են, որ ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի նախատեսել եւ օգտագործել համապատասխան ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասով իրենց պարտավորությունների կատարման համար, ինչպես սահմանված է 1-4-րդ կետերում:

### *Հոդված 8*

#### **Փորձառությունը եւ հմտությունները**

Անդամ պետություններն ապահովում են, որ ազգային համակարգով պահանջվի, որ բոլոր կողմերը կազմակերպչական քայլեր ձեռնարկեն իրենց անձնակազմի անդամներին կրթելու եւ վերապատրաստելու, ինչպես նաեւ հետազոտություններ

Եւ զարգացման գործողություններ իրականացնելու համար՝ բավարարելու աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային ծրագրի պահանջները՝ անհրաժեշտ փորձառություն եւ հմտություններ ձեռք բերելու, պահպանելու եւ հետագայում զարգացնելու նպատակով:

### *Հոդված 9*

#### **Ֆինանսական միջոցները**

Անդամ պետություններն ապահովում են, որ ազգային համակարգով պահանջվեն համապատասխան ֆինանսական միջոցներ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել 11-րդ հոդվածում նշված ազգային ծրագրերը, հատկապես՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար՝ պատշաճ ձեով հաշվի առնելով աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների գեներատորների մասով պատասխանատվությունը:

### *Հոդված 10*

#### **Թափանցիկությունը**

1. Անդամ պետություններն ապահովում են աշխատողներին եւ հանրությանը աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հասանելիությունը: Սույն պարտավորության շրջանակներում ապահովվում է հասարակության իրազեկումն իրավասու կարգավորող մարմնի կողմից՝ վերջինիս իրավասության սահմաններում: Հասարակությանը տեղեկություններ են տրամադրվում ազգային օրենսդրությանը եւ միջազգային պարտավորություններին համապատասխան՝ պայմանով, որ սա չի

վտանգում ազգային օրենսդրությամբ կամ միջազգային պարտավորություններով ճանաչված այլ, մասնավորապես, անվտանգությանն առնչվող շահեր:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հասարակությանը տրվեն անհրաժեշտ հնարավորություններ արդյունավետորեն մասնակցելու աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարմանն առնչվող որոշումներ կայացնելու գործընթացին՝ համաձայն ազգային օրենսդրության եւ միջազգային պարտավորությունների:

### *Հոդված 11*

#### **Ազգային ծրագրերը**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ իր ազգային ծրագրի (ազգային ծրագիր) իրականացումը, որն ընդգրկում է տվյալ երկրում առկա աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների բոլոր տեսակները, ինչպես նաեւ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման բոլոր փուլերը՝ առաջացումից մինչեւ թաղում:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն պարբերաբար վերանայում եւ թարմացնում է իր ազգային ծրագիրը՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տեխնիկական եւ գիտական առաջընթացը, ինչպես նաեւ փորձագիտական գնահատումից ստացված առաջարկությունները, կուտակված փորձը եւ փորձագիտական գնահատման արդյունքում վերհանված լավ գործելակերպերը:

*Հոդված 12***Ազգային ծրագրերի բովանդակությունը**

1. Ազգային ծրագրերով սահմանվում է, թե անդամ պետությունները Հրահանգի նպատակների իրականացումն ապահովելու համար ինչպես են մտադիր իրականացնել 4-րդ հոդվածում նշված՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների պատասխանատու եւ անվտանգ կառավարման վերաբերյալ իրենց ազգային քաղաքականությունները, եւ այդ ծրագրերն ընդգրկում են հետեւյալ բոլոր կետերը՝
  - ա) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ անդամ պետության ազգային քաղաքականության ընդհանուր նպատակները.
  - բ) նշանակալից հենանիշերը եւ այդ հենանիշերին հասնելու հստակ ժամկետները՝ հաշվի առնելով ազգային ծրագրի համընդհանուր նպատակները.
  - գ) ամբողջ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների գույքագրում եւ ապագա քանակների, այդ թվում՝ շահագործման դադարեցումից հետո առաջացած քանակների գնահատում՝ հստակ նշելով ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի տեղակայման վայրը եւ չափը՝ համաձայն ռադիոակտիվ թափոնների համապատասխան դասակարգման.
  - դ) աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների՝ առաջացումից մինչեւ թաղում կառավարման համար հայեցակարգերը կամ պլանները, ինչպես նաեւ տեխնիկական լուծումները.
  - ե) հայեցակարգեր կամ պլաններ՝ գերեզմանոցի շահագործման ժամկետի փակմանը հաջորդող ժամանակահատվածի համար, այդ թվում՝

այն ժամանակահատվածը, որի ընթացքում շարունակվում են իրականացվել համապատասխան վերահսկումներ, եւ միջոցներ են ձեռնարկվում երկար ժամկետում այդ տեղակայանքի մասին գիտելիքները պահպանելու համար.

- զ) հետազոտություններ, զարգացման եւ ցուցադրման գործողություններ, որոնք անհրաժեշտ են աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման համար լուծումներ իրականացնելու համար.
- է) ազգային ծրագիրն իրականացնելու պատասխանատվությունը եւ կատարման հիմնական ցուցանիշները՝ իրականացման համար առաջընթացը մշտադիտարկելու համար.
- ը) ազգային ծրագրի ծախսերի եւ դրա հիմքերի գնահատում, ինչպես նաեւ այդ գնահատման վարկած, որը որոշ ժամանակ անց պետք է ներառի պրոֆիլ.
- թ) ֆինանսավորման գործող սխեման (սխեմաները).
- ժ) թափանցիկության քաղաքականություն կամ գործընթաց, ինչպես նշված է 10-րդ հոդվածում.
- ժա) առկայության դեպքում՝ անդամ պետության կամ երրորդ պետության հետ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման, այդ թվում՝ գերեզմանոցների օգտագործման վերաբերյալ կնքված համաձայնագիրը (համաձայնագրերը):

2. Ազգային ծրագիրն ազգային քաղաքականության հետ միասին կարելի է ներառել մեկ կամ մի քանի փաստաթղթերում:

*Հոդված 13***Ծանուցումը**

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին ծանուցում են իրենց ազգային ծրագրերի եւ ցանկացած հետագա էական փոփոխության մասին:
2. Ծանուցման օրվանից վեց ամսվա ընթացքում Հանձնաժողովը կարող է պարզաբանում պահանջել եւ (կամ) հայտնել իր եզրակացությունն այն մասին, թե արդյոք ազգային ծրագրի բովանդակությունը համապատասխանում է 12-րդ հոդվածին:
3. Հանձնաժողովի պատասխանը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, անդամ պետությունները ներկայացնում են հայցվող պարզաբանումը եւ (կամ) տեղեկացնում Հանձնաժողովին ազգային ծրագրերի ցանկացած վերանայման մասին:
4. Համայնքի համար աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների կամ գործողությունների համար ֆինանսական կամ տեխնիկական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հանձնաժողովը հաշվի է առնում ազգային ծրագրերի վերաբերյալ անդամ պետությունների պարզաբանումները եւ առաջընթացը:

*Հոդված 14***Հաշվետվություններ ներկայացնելը**

1. Անդամ պետությունները սույն հրահանգի իրականացման վերաբերյալ առաջին անգամ պետք է Հանձնաժողով հաշվետվություն ներկայացնեն մինչ 2015 թվականի օգոստոսի 23-ը եւ այնուհետեւ՝ յուրաքանչյուր երեք տարին

մեկ՝ օգտվելով Համատեղ կոնվենցիայի համաձայն վերանայումից եւ հաշվետվություններ ներկայացնելուց:

2. Անդամ պետությունների հաշվետվությունների հիման վրա՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ է ներկայացնում հետեւյալը՝

ա) հաշվետվություն՝ սույն հրահանգի իրականացման արդյունքում ունեցած առաջընթացի վերաբերյալ, եւ

բ) Համայնքի տարածքում առկա ռադիոակտիվ թափոնների եւ աշխատած վառելիքի գույքագրում եւ ապագա հեռանկարները:

3. Անդամ պետությունները պարբերաբար եւ առնվազն յուրաքանչյուր տասը տարին մեկ պատրաստում են ինքնագնահատումներ՝ իրենց ազգային համակարգերի, իրավասու կարգավորող մարմինների, ազգային ծրագրի եւ դրա իրականացման մասին, եւ առաջարկում միջազգային փորձագիտական գնահատում՝ իրենց ազգային համակարգերի, իրավասու կարգավորող մարմինների եւ (կամ) ազգային ծրագրերի վերաբերյալ՝ աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման ոլորտում անվտանգության բարձր ստանդարտներ ապահովելու նպատակով: Ցանկացած փորձագիտական գնահատման արդյունք ուղարկվում է Հանձնաժողով եւ մյուս անդամ պետություններ եւ կարող է հասանելի լինել հանրությանը, եթե դա անվտանգության եւ գաղտնի տեղեկատվության հետ կապված խնդիր չի առաջացնում:



## ԳԼՈՒԽ 3

**ԵՐԱՓՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐ***Հոդված 15***Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական դրույթները մինչև 2013 թվականի օգոստոսի 23-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Սույն հրահանգի՝ աշխատած վառելիքի վերաբերյալ դրույթների փոխատեղման եւ իրականացման պարտավորությունները չեն կիրառվում Կիպրոսի, Դանիայի, Էստոնիայի, Իռլանդիայի, Լատվիայի, Լյուքսեմբուրգի եւ Մալթայի նկատմամբ, քանի դեռ վերջիններս որոշում են միջուկային վառելիքի մասով որեւէ գործունեություն չիրականացնել:
3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում, ինչպես նաեւ այդ դրույթներում կատարված ցանկացած հետագա փոփոխություն:
4. Անդամ պետություններն առաջին անգամ հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 2015 թվականի օգոստոսի 23-ը ծանուցում են Հանձնաժողովին իրենց

ազգային ծրագրի բովանդակության մասին, որն ընդգրկում է 12-րդ հոդվածով նախատեսված բոլոր կետերը:

*Հոդված 16*

**Ուժի մեջ մտնելը**

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

*Հոդված 17*

**Հասցեատերերը**

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2011 թվականի հուլիսի 19-ին:

*Խորհրդի կողմից՝*

*Նախագահ*

Մ. ՍԱՎԻԿԻ

---